Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 – 1920 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 1999

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ.Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918 – 1920 թթ.

(Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից)

ԵՐԵՎԱՆ 1999

ԳՄԴ 9(47-925)

Հրատարակության է երաշխավորված Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի Սոցիալ-քաղաքական Գիտությունների և Ընդհանուր տնտեսագիտության դեպարտամենտի կողմից:

Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից).- Վ. Հ. Վիրաբյան : ՀՊճՀ, Երևան, 1999 թ., 39 էջ:

Գրքույկը նվիրված է Հայաստանի Առաջին Հանրապետության (1918 թ. մայիսի 28 – 1920թ. դեկտեմբերի 2) քաղաքական պատմության չբացահայտված նորագույն էջերից մեկի՝ հատուկ ծառայությունների (հետախուզության և հակահետախուզության) ստեղծման, կազմակերպման ու զարգացման դժվարին գործընթացի, ինչպես նաև ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեության սկզբունքորեն կարևոր մի շարք հարցերի համակողմանի լուսաբանմանը: Հանրագումարի են բերված ՀՀ ռազմաքաղաքական համակարգի այդ կարևոր կառույցների՝ հատուկ ծառայությունների գործունեության արդյունքները, դրանց պատմական փորձն ու դասերը: Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների և, ընդհանրապես, հայոց նորագույն պատմությամբ հետաքրքրվող լայն հասարակության համար:

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Գ. Թունյան

Գրախոսներ՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Ս. Սարգսյան
դոցենտ Ա. Մ. Հարությունյան
պատմական գիտությունների թեկնածու Ա. Ս. Վիրաբյան

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, 1999

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վերջին տարիներին տեղի ունեցած արմատական հեղաբեկումները հասարակական-քաղաքական հարաբերությունների և մարդկային հանրության գիտակցության մեջ նոր խնդիրներ առաջադրեցին գիտնականներին: Մասնավորապես օրվա հրամայականը դարձավ ուսումնասիրելու Հայոց նորագույն, հատկապես, Հայաստանի երեք հանրապետությունների պատմությունը, դրանց պատմական փորձն ու դասերը: Բացառիկ նշանակություն է ձեռք բերում Հայաստանի Առաջին հանրապետության (1918 թ. մայիսի 28 – 1920թ. դեկտեմբերի 2) ռազմաքաղաքական համակարգի և նրա առանձին կառույցների ուսումնասիրումը: Առաջին հանրապետության ռազմաքաղաքական կարևոր կառույցներն են եղել բանակը, միլիցիան և, անշուշտ, հատուկ ծառայությունները: Նկատի ունենալով, որ Հայաստանի Երկրորդ (1920թ. դեկտեմբերի 2 – 1991թ. սեպտեմբերի 21, այսպես կոչված, սոցիալիստական հանրապետության փուլը) և Երրորդ հանրապետության (1991թ. սեպտեմբերի 21-ից առ այսօր) ռազմաքաղաքական համակարգում ևս կարևոր տեղ են գրավել ու գրավում այդ կառույցները, այստեղից էլ ինքնին հասկանալի է դառնում, թե որքան այժմեական ու հրատապ նշանակություն է ստանում Հայաստանի Առաջին հանրապետության անվտանգության կառույցներից մեկի՝ հատուկ ծառայությունների (հետախուզության և հակահետախուզության) կազմակերպման անցյալի ողջ փորձի համակողմանի ուսումնասիրումը և ընդհանրացումը, որոնք ունեն գործնական և ճանաչողական նշանակություն այսօրվա պետաքաղաքական և հասարակական և հատկապես գեոռազմական ու անկախ պետականության գործընթացի տեսանկյունից: Ինքնին հասկանալի է, որ այս գրքույկում հնարավոր չէ ամբողջովին ընդգրկել Հայաստանի հատուկ ծառայությունների 1918-1920 թթ. գործունեությունը իր բոլոր դրվագներով և մանրամասներով:

Այսուամենայնիվ, քանզի ներկայումս զգալի չափով մեծացել է հետաքրքրությունը պատմական անցյալի դեպքերի ու իրադարձությունների նկատմամբ և, մասնավորապես, Հայաստանի Առաջին հանրապետու-

թյան նկատմամբ, ստորև փորձ է արվել վերհանել հենց այդ շրջանի պատմական հիշողությունը՝ անդրադառնալով հատուկ ծառայությունների կազմակերպման ու գործունեության դժվարին ուղու մի քանի չբացահայտված էջերի:

ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920 ԹԹ.

Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորումը և կայացումը (1918 թ. մայիսի 28 – 1920թ. դեկտեմբերի 2) ընթանում էր ծանրագույն ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակում: Անհրաժեշտ էր կարճատև պատմական ժամանակամիջոցում ոչնչից ստեղծել պետական-քաղաքական ուժային կարևորագույն կառույցներ՝ բանակ, ոստիկանություն (միլիցիա), հատուկ ծառայություններ և այլ հանգույցներ, առանց որոնց անհնարին է անգամ պատկերացնել ցանկացած կազմակերպված պետության գոյությունը և ինքնուրույնությունը առհասարակ: Պետությունն անկարելի է պատկերացնել առանց հետախուզության և հակահետախուզության գործի հիմնավոր կազմակերպման:

Այս աշխատանքն էլ հենց վերաբերում է Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության, հատուկ ծառայությունների ողջ համակազմի աշխատանքի կազմակերպմանը, նպատակամղմանը ազգային անվտանգության բարդագույն խնդիրների լուծմանը: Հարկ է նշել, որ մինչև օրս թեման չափազանց անբավարար է ուսումնասիրված, և դեռ իր ուսումնասիրողներին է սպասում: Սակայն այդ խնդրի իրագործումը զգալիորեն դժվարանում է այն հանգամանքով, որ այս հարցի վերաբերյալ շատ սուղ տվյալներ կան արխիվներում կամ գրեթե չկան: Հաճախ խաբուսիկ տպավորություն է ստեղծվում, թե այդպես էլ Առաջին Հանրապետությունը չի ունեցել ազգային անվտանգության այդ կարևորագույն կառույցները, կամ էլ ի վիճակի չի եղել ստեղծել դրանք: Սակայն նույնիսկ առկա սուղ փաստերը, որոնք մենք հայթհայթել ենք արխիվներից, հիմք են տալիս մեզ եզրակացնելու, որ դրանով զբաղվող մարդիկ եղել են, որ կառավարությունը փորձել է իր շատ համեստ բյուջեից գումարներ հատկացնել այդ գործի կազմակերպման համար, ուղիներ է որոնել, հաջողությունների է հասել և ցավալի սայթաքումներ ունեցել:

Այսպես, դեռ 1918 թ. օգոստոսի 13-ին Հայաստանի հանրապետության մինիստրների խորհուրդը լսում է ռազմական նախարարության՝ իրեն միջոցներ բաց թողնելու միջնորդության մասին՝ ծածկելու համար ավիա-

ցիայի, հետախուզության և հակահետախուզության, ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները: Նախարարների խորհուրդը, քննարկելով հարցը, որոշում է կայացնում հավանություն տալ ծեռնարկված քայլերին, ինչպես նաև կառավարության վարկի հաշվին բաց թողնել 6 միլիոն ռուբլի՝ ա) չնախատեսված ծախսերի համար հատկացնել 20 հազար ռուբլի, բ) ինչպես նաև հետախուզության, և գ) հակահետախուզության համար ...N գումարներ[1]:

1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի Առաջին Հանրապետության նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանի մեջ հետախուզական և հակահետախուզական գործի մասին, որոշում է կայացնում այդ գործունեությունը ենթարկել Հայաստանի Հանրապետության դեսպանների հսկողությանը[2]:

1919 թ. մարտին թվագրվող Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից մեկում շարադրվում են ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները, նրանց հետախուզության օբյեկտները և դիվանագիտական ներկայացուցչության հետ կապերի ձևերն ու եղանակները, որպես նրանց գործունեության պարտադիր պայմաններ, ինչի համար նախատեսվում էին չորս մարդ բարձր կոչումներով, երեք հոգի՝ ցածր սպայական կոչումներով[3]: Այդ նույն փաստաթղթում նշվում էր, որ Թիֆլիսում պահանջվում է գլխավոր շտաբի բարձր սպայական կոչում ունեցող սպա, որ ռազմական գծով պետք է լինի դիվանագիտական ներկայացուցչության կազմում, և փաստորեն անհրաժեշտ ռազմաքաղաքական հետախուզական տվյալները պետք է հավաքվեին և հաղորդվեին նրա միջոցով: Այդ գործի համար միակ հնարավոր թեկնածուն համարվում էր գեներալ Կորգանովը, որը փայլուն գիտեր ֆրանսերեն, անգլիացիներին գիտեր իր գործունեությունից Պարսկաստանում, որտեղ եղել էր գեներալ Բարաթովի էքսեդիցիոն կորպուսի շտաբի կազմում[4]:

Կարևոր է նաև կառավարության որոշումը սահմանապահ գնդերի կազմակերպման մասին, որի մասին զեկուցում լսվեց նախարարների խորհրդի 1920թ. հունիսի 14-ի նիստում, որի մասին տրվում են համապատասխան հանձնարարականներ[5]:

Հայաստանի հատուկ ծառայությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ որոշակի շնորհակալ աշխատանք է կատարել պատմական գիտությունների թեկնածու Ա. Մանուկյանը, որն իր հոդվածում շրջանառության մեջ է դրել Անդրկովկասյան երկրամասային ՌԿ(բ)Կ վերահսկողության հանձնաժողովի 1927թ. հոկտեմբերի 20-ի նիստի հետ անմիջականորեն առնչվող քրեական գործի նյութերը, որը հարուցվել էր 1927 թ. հուլիսին Վահագն Մուրադյանի,Միքայել Դոդոխյանի, Գրիգորի Խաչատրյանի և Գրիգորի Երամովի նկատմամբ, ինչի շնորհիվ ընթերցողի սեփականությունն են դառնում մի շարք արժանահիշատակ փաստեր, որոնցով ակնհայտ է դառնում այն բոլոր մեղադրանքների ողջ սնանկությունը, որոնք ներկայացվել են Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության կազմակերպիչների նկատմամբ[6]: Ինչպես պարզորոշ է դառնում արխիվային և այլ կարգի նյութերի և, մասնավորապես այդ տխրահռչակ հետաքննության արխիվային որոշ վավերագրերի արծանագրությունների մանրազնին վերլուծությունից, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-20 թվականներին կայացման ոչ միանշանակ ու դժվարին գործընթացներում են գտնվել, համառորեն որոնումներ են կատարվել այն ղեկավարող սպայակազմի ձևավորման և տեղերում գործնական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Վկաները, որոնք հանդես են եկել 1927թ. նշված «գործով», ինչպես երևում է նիստի արծանագրությունից, պարզապես «առաջադրանք» են կատարել վարկաբեկելու Առաջին Հանրապետության այդ չափազանց օգտակար կառույցները և այն ղեկավարող մարմինները, օգտագործելով միանգամայն սնամեջ և ոչնչով իրապես չհիմնավորված «փաստարկներ»: Միևնույն ժամանակ հենց այդ «շինծու փաստարկներն» էլ իրենց հերթին անուղղակիորեն պատմության սեփականությունն են դարձնում որոշ արժանահիշատակ փաստագրություն այդ ժամանակաշրջանի հատուկ ծառայության կառույցների գործունեությունից, նրա նվիրյալների

ուսանելի կյանքից: Ա. Մանուկյանի նշված հոդվածից և հայտնի գործի մասին ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրամասային վերահսկողության հանձնաժողովի 1927թ. հոկտեմբերի 20-ի նիստի արխիվային փաստաթղթերի հետազոտությունից բացահայտվում է, որ Հայկական բանակում գլխավոր շտաբի ստեղծման գաղափարի հեղինակը եղել է ռուսական բանակի սպա գնդապետ Զինկևիչը, որը նպատակադրում ուներ ստեղծելու Դենիկինի կամավորական բանակի ինքնավար կառուցվածք, որպեսզի ցանկացած պահի կատարի այդ բանակի ցուցումները, որի ոչ պաշտոնական ներկայացուցիչն էր նա սկզբնապես: Դենիկինի ներկայացուցչության դերն այն էր, որպեսզի Հայաստանում ապրող և գործող ռուսական բանակի կադրային սպաներին հավաքագրեն և հայկական ձևավորվող բանակի կառույցներում տեղաբաշխելով, նրանց օգտագործեն հեռուն գնացող ռազմավարական բազմաբնույթ խնդիրների լուծման գործում, ընդհուպ մինչև Հայաստանում Դենիկինյան իշխանության հաստատումը, համատեղ պայքարը բոլշևիզմի վտանգի դեմ: Զինկևիչն էլ հենց այն մարդն էր, որի առջև դրվեցին համապատասխան բնույթի առաջադրանքներ: Հարկ է նաև առանձնահատուկ նշել, որ դա այն Զինկևիչն էր, որը Հայաստանի Առաջին Հանրապետության ականավոր ծնունդի ականատեսներից էր և նոր պետության ուժային կառույցների ստեղծողների համահեղինակներից մեկը (վերն ասված վերապահումներով հանդերձ): Դեռ 1918թ. հոկտեմբերի 5-ին Երևանում Հայկական Դիվիզիայի գնդապետ Զինկևիչի և Օսմանյան բանակի Արևելյան խմբի շտաբների պետ Բասրի բեյի միջև կայացած բանակցությունների արդյունքով ստորագրվում է արձանագրություն, որով որոշակիանում են երկու կողմերի զորքերի տեղաբաշխման ու սահմանային, ինչպես նաև տեղանքի հետ կապված մի շարք խնդիրներ: Բացի այդ, արձանագրության հիման վրա ձեռք է բերվում պայմանավորվածություն թուրքական զորքերի հեռացումից հետո որոշված բնակավայրերը և սահմանակետերը հայկական զորաբանակներով զբաղեցնելու մասին: Հատուկ կարևորություն է տրվում երկաթուղային հաղորդակցության, հեռագրաթելի և հեռախոսային կապի խնդիրներին: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերում, թե ինչ

սկզբունքներով պետք է այդ երկաթուղագիծը շահագործվեր թուրքական պետության համապատասխան անձնակազմի ու նրա պետի կողմից, ընդ որում բոլոր դեպքերում հայկական քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից ցուցաբերվելիք աջակցության և օգնության մասին[7]: Որպես փորձառու կադրային զինվորական, գլխավոր շտաբի ղեկավար Զինկևիչը իրականացնում էր նաև կապի ապահովումը հայկական դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների հետ, որոնք տեղեկատվության աղբյուր էին հանդիսանում և հետախուզական աշխատանք էին կատարում արտասահմանում: Այսպես, 1919թ. հուլիսի 22-ին Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչությանը կից ռազմական կցորդին ուղղված հաղորդագրության մեջ Զինկևիչը հայտնում էր, որ պարբերաբար կուղարկի օպերատիվ տեղեկություններ: Կոնկրետ այդ դեպքում նա կարևոր տվյալներ էր հաղորդում Բոյուք-Վեդիի իրադարձությունների, այդ դեպքերի առնչությամբ Շարուր-Նախիջևանի շրջանում մուսուլմանների մեջ ուժեղ խմորումների մասին, որոնք Նախիջևանում վերածվեցին բացահայտ ապստամբության օրինական իշխանությունների դեմ: Զինկևիչը միևնույն ժամանակ շեշտում էր, որ ապստամբությունը ճնշվել է հենց նույն օրը, օգտագործվել է նաև հրետանի: Ամփոփագիրը Զինկևիչը ավարտում էր, տեղեկացնելով, որ նույն օրն իսկ հրաման է տրվել դադարեցնել ռազմական գործողությունները Բոյուք-Վեդիի շրջանում, ինչպես նաև Զանգեզուրում և Կարսում, ավելացնելով, որ դա արվում է անգլիացիների ճնշման տակ[8]: Այս կարևոր տեղեկատվությամբ մեկ անգամ ևս ակնհայտ է դառնում Մեծ Բրիտանիայի հետամտած քաղաքականության ողջ իմաստն ու բովանդակությունը, պարզորոշվում է անգլիացիների պրոմուսուլմանական, պրոթուրքական կողմնորոշումը, ինչն արտահայտվեց հետագայում ևս, և մասնավորապես նրանում, որ անգլիացիները, չնայած հայկական կողմի բողոքարկմանը և գեներալ Թ. Նազարբեկյանի կտրուկ դիրքորոշմանը, 1919 թ. կեսերին զբաղված էին Կարսից հրանոթների (ավելի քան 60 հատ), մեծ քանակությամբ արկերի, փամփուշտների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերմամբ, և այն մուսավաթական Բաքու

տեղափոխելով[9], ինչը ևս բացասաբար անդրադարձավ 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի պաշտպանունակության գործը կազմակերպելու և բարոյահոգեբանական ճնշող տպավորություն թողնելով զինվորականության վրա:

Կարևոր տեղեկություն է ուղարկվում Թիֆլիս՝ Հայկական դիվանագիտական ներկայացուցչությանը կից ռազմական կցորդ գեներալ Քիշմիշևի հասցեով, 1919թ. սեպտեմբերի 7-ին: Ուղարկողը Հայաստանի հանրապետության Գլխավոր շտաբի ընդհանուր բաժնի պետ կապիտան Շումովն էր, պրոֆեսիոնալ հետախույզ: Վերը բերված հաղորդագրության մեջ Շումովը տեղեկություն էր տալիս օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 4-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Դրանում հաղորդվում էր մուսուլմանական բնակչության եռանդուն նախապատրաստությունների ու տեղաշարժերի մասին Բասարգեչար-Թազաքենդ-Դարալագյազ-Նոր Բայազետ-Ղամարլու գծի վրա, ուր տեղի էին ունեցել բախումներ քրդերի հետ, որոնք գործում էին փոքրաթիվ խմբերով: Նշվում էր դարձյալ Բոյուք-Վեդիի մուսուլմանաբնակ գյուղերի աշխուժացման մասին: Հետախուզական տեղեկատվության մեջ ասվում էր նաև Կաղզվան-Քարաքուրտի քրդերի գործողությունների մասին, որոնք նպատակ էին հետապնդում մաքրել Կաղզվանի շրջանը իրենց համար օտարածին բնակչությունից: Հաղորդվում էր նաև Մերդենենկի ուղղությամբ քրդերի ակտիվացման, նրանց և հայկական կողմի կորուստների, ինչպես նաև հայկական զորքերի հրամանատարների շրջանում իշխող տրամադրությունների մասին[10]: Տեղեկատվությունից պարզ է դառնում նաև, որ հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները Անդրկովկասում ոչ միայն դիվանագիտական հարաբերությունների ապահովման կարևոր օղակներ էին, այլև հետախուզական տեղեկատվության չափազանց կարևոր կենտրոնատեղիներ, հայրենիքի համար արտաքին աշխարհի հետ քիչ թե շատ հուսալի կապի միջոցներ: 1920թ. մայիսի 22-ի տեղեկատվությամբ Բաթումի ընդհանուր հյուպատոսությունը հաղորդում էր Հայաստանի արտաքին գործերի նախարարին ադրբեջանական կառավարության և նրա դիվանագիտական ներկայացուցիչների միջև

փոխանակված գաղտնի գրությունների մասին, որոնք վերաբերում էին Ադրբեջանի կառավարության, նրա ներկայացուցիչների ու գաղտնի գործակալների Հայաստանում ծավալած հակապետական գործունեությանը, որը զգալի վնաս էր հասցնում երկրի անվտանգության գործին[11]:

Միանգամայն ակնհայտ է, որ 1918-20թթ. դժվարին տնտեսաֆինանսական և ռազմաքաղաքական իրավիճակում հատուկ ծառայությունները աշխատում էին, ջանքեր էին գործադրում կայանալու որպես ինքնուրույն օրգանիզմ: Վերը հիշված Զինկևիչը և նրա զինակիցները այդ գործի կազմակերպման պիոներներն էին Հայաստանում: Վերադառնալով Զինկևիչի դերին՝ որպես բածրաստիճան կադրային սպայի, որը 1918-20թթ. բազմաթիվ փոխառնչություններ ունեցավ Հայաստանի կառավարության հետ պետական ռազմաքաղաքական մեքենայի զանազան կառույցների ձևավորման հարցում, հարկ է ավելացնել, որ ձևավորելով գլխավոր շտաբը 1919թ. սկզբին, նա որպես այդ կառույցի ղեկավար մնաց շատ կարճ ժամանակ, որից հետո մեկնեց Դենիկինի գլխավոր շտաբ և այնտեղից վերադարձավ որպես նրա կողմից լիազորված դիվանագիտական ներկայացուցիչ Հայաստանում: Նա իր շուրջը հավաքեց կադրեր, որոնք տեղում բավարար գործունեություն ծավալեցին և շարունակեցին նրա կազմակերպած գործը, որը Հայաստանին շատ էր անհրաժեշտ գլխավորապես թշնամական պետությունների գեոքաղաքական միջավայրում գոյատևելու և զարգանալու համար: Ինքնին հասկանալի է, որ Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունը իր ենթակառույցներով ստեղծվել է հենց ռազմական նախարարության կազմում, ինչը միանգամայն բնական է մի երկրի համար, որն անընդհատ գտնվելիս է եղել պատերազմական իրավիճակում: Գլխավոր շտաբի կազմում ընդգրկվեցին փորձառու փոխգնդապետներ Շնեուրը և Պրիտոմանովը, որոնց անունները բազմիցս հայտնվում են պատերազմական և այլ արտակարգ իրավիճակների հետ կապված տեղեկագրերում (այդ մասին են վկայում տարաբնույթ արխիվային փաստաթղթերը և մասնավորապես ՀՀ Պետական Կենտրոնական Պատմական արխիվի մի շարք ֆոնդերի վավերագրերը), ինչպես նաև կապիտաններ

Շումովը, Մեդվեդևը և հայկական դիվիզիայի շտաբի զորամասերի մի շարք սպաներ[12]:

Գլխավոր շտաբն իր ստեղծման պահից ուներ հետևյալ բաժինները՝

Ընդհանուր – պետ՝ Շումով, օգնական՝ պոդպորուչիկ Մենիկ Դվերնիցկի.

Օպերատիվ – պետ՝ Պրիտոմանով.

Հետախուզական – պետ՝ փոխգնդապետ Շնեուր, մի շարք աշխատակիցներ.

ա) հետախուզության գծով – 1919թ. սեպտեմբերից մինչ 1920թ. ապրիլը որպես բաժնի պետ աշխատել է Վահագն Գալուստի Մուրադյանը, որն անկուսակցական էր, իսկ 1920թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ Տիգրան Դեվոյանը, որը քաղաքական համոզմունքներով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ էր, վերջապես, 1920թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը ընկած ժամանակահատվածում (դեկտեմբերի 2-ը) հետախուզական բաժինը որպես նրա պետ գլխավորել է Միքայել Դոդոխյանը:

Հետախուզության բաժնում աշխատում էին պոդպորուչիկ Լևոն Բաշինջաղյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև հետախուզության ռեզիդենտ Վրաստանում), Սեմյոն Հովսեփյանը (գրասենյակի և Ղամարլուում հետախուզության վարիչ), որին հետագայում գրասենյակի վարիչի պաշտոնում փոխարինել է Միքայել Նազարբեկովը, ինչպես նաև Արշակ Սարգիսյանը (ռեզիդենտ Բաքվում), Գրիգորի Երամովը (դիտորդ Վրաստանում) և ուրիշներ.

բ) հակահետախուզության բաժինը ղեկավարում էր Հովան Խան-Կոտուրսկին, որին փոխարինում և գործակալներին հետևում էր հանձնարարությունների գծով սպա Գրիգորի Խաչատրյանը.

գ) ընդհանուր բաժինը գլխավորում էր Պյոտր Պալիևը[13]:

Ինչպես իրավացիորեն նշվում է Ա. Մանուկյանի վերը բերված հոդվածում, հատուկ ծառայության այդ գերատեսչությունը իր հիմնադրման պահից իսկ զբաղվում էր ոչ միայն ռազմական բնույթի խնդիրներով, այլև և քաղաքական-հետախուզիչ, հետաքննչական գործունեությամբ: Հարկ է

ընդգծել նաև, որ հատուկ ծառայության այդ մարմինները ստեղծվել էին դենիկինյան բանակի համապատասխան օղակի նմանությամբ, իսկ վերջինս, փաստորեն և ըստ էության ժառանգել էր ցարական Ռուսաստանի հատուկ ծառայությունների կառուցվածքը: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում Դենիկինից պահանջվում էր համապատասխան նմանօրինակ գործունեություն ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների նկատմամբ, որը օրակարգային հարց էր և նոր կազմավորված Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության համար (այդ էին պահանջում նաև Երևանում գտնվող անգլիական քաղաքական ներկայացուցչության ղեկավար Գրեսսին, նրա ռազմական կցորդ կապիտան Կուրտը):

Հայաստանի հանրապետության հետախուզական ստորաբաժանումը զբաղվում էր հաղորդագրությունների հավաքմամբ և ընդհանուր ինֆորմացիոն բնույթի զեկուցումների, ամփոփագրերի կազմմամբ: Այստեղ նաև հավաքվում էր տեղեկատվություն և կազմվում էին տեղեկագրեր Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին:

Հակահետախուզության բաժնի գործառնությունները ծեռք բերված տեղեկատվության հիման վրա իրականացվող օպերատիվ-հետաքննչական խնդիրներն էին: Բացի այդ, դաշնակցական Հայաստանի հանրապետության հետախուզական բաժինը որոշակի աշխատանք էր իրականացնում սահմանից այն կողմ: Բաժինն իր գործունեության դաշտի մեջ էր ներառել առաջին հերթին Անդրկովկասը, ինչպես նաև Ռուսաստանի հարավը և Հյուսիսային Կովկասը: Աշխատանքն իրականացվում էր արտաքին գործոց նախարարության միջոցով, որն ինչպես արդեն նշվել է վերը, իր ներկայացուցչություններին կից ուներ հետախուզական ապարատ և ռեզիդենտուրա:

Ամբողջապես հետախուզական ապարատն ուսումնասիրում էր Հայաստանի ռազմաքաղաքական դրությունը, իսկ մյուս կողմից, իր հաստատած ռեզիդենտների միջոցով տեղեկություններ հաղորդում Անդրկովկասի հանրապետությունների մակարդակով, Դենիկինի Կամավորական բանակի և Սովետական Ռուսաստանի և, մասնավորապես Կարմիր

բանակում իշխող իրավիճակի և զինվորականության տրամադրությունների մասին: Այդ հետախուզական բաժինը անցկացնում էր նաև հետախուզական գործունեություն ընդդեմ Թուրքիայի և Իրանի, կապված թուրքական բանակի վիճակի, նրա տեղադրության, թվաքանակի, պլանների և տարածաշրջանային աշխարհաքաղաքական այլ հարցերի մասին: Ի դեպ, հարկ է հատուկ նշել նաև այն մասին, որ Հայաստանի հանրապետության հետախուզության և հակահետախուզության գործունեության սկզբնական փուլը բնութագրվում է սպիտակգվարդիական կամավորական բանակի ազդեցության գերիշխմամբ: Եվ դա այնքան շոշափելի ու զգալի էր, որ հետագայում նույնիսկ Հայաստանի Առաջին հանրապետության դաշնակցական կառավարությունը սկսեց միջոցներ ձեռնարկել նրա համար, որպեսզի մեկուսացնի սպիտակգվարդիական սպաներին հետախուզական գործունեությունում անմիջական դերից, որը նրանք վարում էին տենդենցիոզ կերպով և հարմարեցնելով գլխավորապես Դենիկինի կամավորական բանակի շահերին: Այդ վերջին իրողության հետ էլ հենց կապված դաշնակցական կառավարությունը առաջ քաշեց հետախուզական բաժնի պետի և գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնում կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանին, նրան ցուցում տալով սպիտակգվարդիական միտումի հնարավոր չեզոքացման ու մեկուսացման մասին, որը տարվում էր Հայաստանի հանրապետության տարածքում: Այդ ժամանակաշրջանում Հայաստանը ավելի շատ քաղաքական առումով հակված էր դեպի արևմուտք՝ անգլիացիները, քան Դենիկինը, չնայած վերջինիս հետ էլ ձգտում էին չփչացնել հարաբերությունները, քանզի այդ բանակից երբեմն-երբեմն ձեռք էին բերում զենք ու զինամթերք, զինվորական հանդերձանք և այլն: Եվ այնուամենայնիվ, Հայաստանի հանրապետության կառավարությունը փորձում էր սեփական ոտքերի վրա կանգնել բոլոր բնագավառներում, այդ թվում նաև ուժային կառույցների առումով, հատուկ ծառայության ցանց ստեղծելով ամենուր, ուր այն հնարավոր էր գործնական առումով:

Արխիվային փաստաթղթերով և այլ վավերագրերով (չնայած և բավականին սուղ) հաստատվում է այն փաստը, որ Հայաստանի

հանրապետության հակահետախուզությունն իր ներկայացուցիչներն ուներ Հայաստանի տարբեր շրջաններում: Ավելին, հակահետախուզության մարմինները գործում էին նույնիսկ Լեռնային Հայաստանում (Սյունիք-Զանգեզուրում), որի ղեկավարը հայտնի Յապոնն էր (Արմենակ Պարոնյանը), իսկ աշխատակիցն էր Ավետիս Դադայանցը, որոնք համապատասխանաբար 1920 և 1924թթ. անարդարացի մեղադրանքների հիման վրա հանիրավի գնդակահարվեցին[14]:

Այդ տարիներին հատուկ ծառայության բնագավառում են աշխատել նաև մի շարք անձինք, ինչպիսիք են եղել Թիֆլիսում գործող հանձնարարությունների գծով սպա Ալեքսանդր Սուլխանինովը, Թուրքեստանում՝ Ելենա Մոպկավելեան, գործակալ դիտորդ Ավո Հարությունյանը և ուրիշներ: Անհետաքրքիր չէ նշել նաև այլազգիների մասնակցությունը Հայաստանի հատուկ ծառայությունների աշխատանքին (Հուսեյն Հաջիև, Միրզաբաիրով և ուրիշներ. սակայն ինչպես երևում է առկա նյութերից, որոշ անուններ ճշգրտման կարիք են զգում): Եվ վերջապես, նույնիսկ բոլշևիկների միջավայրում գոյություն է ունեցել գործակալական ցանց[15]:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ Հայաստանի հանրապետության հատուկ ծառայություններում ընդգրկված սպաները եղել են հայրենիքին մինչև վերջը նվիրված անձնուրաց մարդիկ, որոնց գործունեության այս կամ այն կողմի վերհանելը մեծ կարևորություն է ներկայացնում Առաջին հանրապետության պատմությունը ամբողջական և լիարժեք ներկայացնելու տեսանկյունից: Անդրադառնանք նրանցից մի քանիսի կենսագրականներին, միաժամանակ վերհանելով պետական կարևորություն ներկայացնող նրանց գործունեության որոշ արժանահիշատակ կողմեր: Այսպես, կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանը Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետն էր 1919թ. սեպտեմբերից մինչև 1920թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ մինչև 1920թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբությունը: Հանդես գալով հետախուզական բաժնի պետի պաշտոնում՝ Վ. Գ. Մուրադյանը "սպիտակգվարդիական" Շնեուրի կողմից ներմուծված կազմակերպական սկզբունքները հմտորեն կիրառեց հետախուզական գործում, ճշգրտելով և ընդլայնելով դրանց

շրջանակները հետագայում: Վ. Գ. Մուրադյանի՝ որպես կադրային սպայի և հետախույզի կենսագրությունը ուշագրավ է և ուսանելի: Վահագն Գալուստի Մուրադյանը ծնվել է 1896 թվականին: Նա ավարտել է Կարսի ուսումնարանը և որոշ ժամանակ անց պետական քննություն է հանձնել Պետրովսկ-Ռազումովյան գյուղատնտեսական ակադեմիայում: Սակայն առաջին աշխարհամարտը կտրուկ փոփոխություններ է մտցնում նրա կենսագրությունում, և ստեղծված նոր իրավիճակում նա ընդունվում է ռազմական մի ուսումնարանի արագացված դասընթացները, այն 4 ամիս անց ավարտելով: Այնուհետև որպես պրապորշիկ նա գործուղվում է Կովկասյան գործող բանակ: Պատերազմի ողջ ընթացքում եղել է հարավային ճակատում (Պարսկաստան-Թուրքիա): Ռուսական Կովկասյան բանակի քայքայումից հետո նա մնում է հայկական զորամասում, լինելով հրամանատարական պաշտոններում և ակտիվորեն մասնակցում թուրքերի դեմ բոլոր ռազմական գործողություններին: Առաջին հանրապետության օրոք նա դաշնակցական կառավարության կողմից նշանակվում է զորահավաքի և դասալքության դեմ պայքարի գծով կոմիսար: Մեկ ամիս անց Վ. Դ. Մուրադյանը նշանակում է ստանում գլխավոր շտաբում, սկզբում որպես հետախուզության և հակահետախուզության պետ, իսկ այնուհետև՝ Գլխավոր շտաբի պետ:1920թ. մարտին վերջինս ընդունվում է Գլխավոր շտաբի դասընթացները Երևանում, իսկ 9 ամիս անց, թուրքերի դեմ ռազմական գործողությունների վերսկսման հետ կապված նշանակվում է գնդի հրամանատարի օգնական: Հայաստանի խորհրդայնացումից հետո տեղափոխվում է Գլխավոր շտաբ՝ որպես հանձնարարությունների գծով աշխատակից՝ շտաբի պետին առընթեր: Այնուհետև, որպես Անդրկովկասի ռազմաքաղաքական իրադարձությունների լավագիտակ տեղափոխվում է Արտգործնախարարություն և ծեռնամուխ է լինում Մոսկվայում թուրքերի հետ կայանալիք կոնֆերանսի (1921թ.) համար նյութերի նախապատրաստմանը: Դեկտեմբերի Վերջերին նշանակվում է ՀԽՍՀ պատվիրակության քարտուղար Մոսկվայում Թուրքիայի հետ կայանալիք հաշտության բանակցություններում, ուր և մեկնում է Ալ. Բեկզադյանի հետ միասին: Դրանից հետո վերադառնալով Թիֆլիս, որպես քարտուղար առժամանակ

աշխատում է Բեկզադյանի մոտ՝ արտգործնախարարության գծով: 1921թ. օգոստոսին «Միացարտառ»-ը ("Объединенная внешняя торговля") նրան գործուղում է Թավրիզ՝ որպես իր մաքսային գրասենյակի քարտուղար, և այդ կարգավիճակում մնում է մինչև 1925թ. փետրվարը: Թավրիզում եղած ժամանակահատվածում Վ. Մուրադյանը աշխատում է սկզբում որպես «Միացարտառ»-ին կից, իսկ այնուհետև «Անդրարտառ»-ին ("Закавказская внешняя торговля") առընթեր, և վերջապես «Անդրպետառ»-ին ("Закавказская государственная торговля") կից գրասենյակի քարտուղար, որից հետո՝ որպես գրասենյակի քարտուղար և կառավարչի տեղակալ: 1922թ. ապրիլին Վ. Մուրադյանը Թավրիզի գլխավոր հյուպատոսությանը կից կուսբջջի կողմից երաշխավորվում է և ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը, որից հետո ընտրվում է տեղկոմի քարտուղար, այնուհետև՝ սովակումբի և «Տրուդ» («Աշխատանք») կոպերատիվի անդամկազմակերպիչ և այլն: Վ. Գ. Մուրադյանի բնակարանը դառնում է տարբեր կարգի գործակալների հանդիպատեղի:

1925թ. փետրվարի վերջերին Վ. Գ. Մուրադյանը վերջնականապես թողնում է Պարսկաստանը: Վ. Գ. Մուրադյանին նշանակում են «Անդրպետառի» ("Закгосторг") թուրք-պարսկական գրասենյակի դիրեկտորի տեղակալ: Այդ ամենից հետո նա պատրաստվում է մեկնել Արդվին, սակայն թուրքերը անցագիր չեն տալիս (ըստ երևույթին թուրքական հետախուզությունը տեղեկություններ ուներ նրա գործունեության մասին հատուկ ծառայության համակարգում):

Վերջապես, 1926թ. մարտին Անդրերկրկոմի որոշմամբ նա նշանակվում է «Անդրպետառ»-ի լիազոր-ներկայացուցիչ Հյուսիս-արևմտյան Պարսկաստանում, սակայն այն դառնում է նրա վերջին նշանակումը, քանի որ Վ. Գ. Մուրադյանը ապօրինաբար ձերբակալվում է, և դատապարտվում է 10 տարի ազատազրկման: Այսպես ավարտվում է Առաջին հանրապետության հատուկ ծառայությունների շնորհաշատ կադրային սպայի հայրենանվեր գործունեությունը[16]:

Հարկ է ավելացնել նաև, որ մի շարք անձիք, որոնք վերոհիշյալ դատաքննչական մեղադրական ակտով դատապարտվել են հանիրավի, 1918-20թթ. ժամանակահատվածում զբաղված են եղել հայրենանվեր աշխատանքով, և նրանց շարքում ամենևին էլ վերջիններից չի եղել պորուչիկ Միքայել Նիկիտայի Դոդոխյանը, որը դաշնակցական հատուկ ծառայության հետախուզական բաժին մտավ 1919թ. հունիսին, և աշխատեց որպես այդ բաժնի պետ 1920թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը՝ 1920թ. դեկտեմբերի 2-ը: Մ. Ն. Դոդոխյանը ղեկավարում էր ստացված տեղեկատվության համակարգման և այլ աշխատանքները[17]: Միքայել Նիկիտայի Դոդոխյանը Հայաստանի Առաջին հանրապետության հետախուզության վառ անհատականություններից էր, որը ժամանակ առ ժամանակ հմտորեն իրականացնում էր նաև հակահետախուզության բաժանմունքի ոլորտին վերաբերող գործառնություններ, այդ առումով ունենալով առանձին հատուկ հանձնարարություններ հակահետախուզության պետ Խան-Կոտուրսկու կողմից՝ իրականացնելով ձերբակալություններ, խուզարկություններ և հետաքննչություն: Եղել են նաև դեպքեր ու իրադրություններ, երբ Մ. Դոդոխյանը օպերատիվ ֆունկցիաներ էր իրագործում հենց Վ. Սուրադյանի հանձնարարությամբ՝ ուղևորվելով Հայաստանի տարբեր թեժ կետեր: Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ թաքնվելով Ղրիմում (խուսափելով խորհրդային բանակում ծառայելուց), տեղավորվում է Սիմֆերոպոլում աշխատանքի մի հայկական ընկերությունում: Հետագայում Դոդոխյանը անցնում է քաղաքացիական աշխատանքի, տեղավորվելով ֆինանսների ժողկոմատում, միաժամանակ մտնում հայկական ազգային ընկերության մեջ՝ իրականացնելով ակումբային աշխատանք[18]:

Բավականաչափ հետաքրքիր է նաև Հայաստանի Առաջին հանրապետության հակահետախուզության աշխատակիցներից մեկի՝ Ստեփան Գրիգորիի Երամովի կերպարը, որը զբաղվել է արտաքին դիտարկմամբ: Նա սկզբում աշխատել է Խաչատրյանի և հետագայում՝ Խան-Կոտուրսկու անմիջական ղեկավարությամբ: Անտեղի չէ նշել նաև, որ Ս. Գ. Երամովը հակահետախուզություն է մտել հայտնի դաշնակցական Արմենակ

Կանավոզովի երաշխավորությամբ և աշխատել այնտեղ մեկ ու կես տարի: Այդ ընթացքում նա իրեն բավականին ակտիվ և նախաձեռնող է դրսևորել, լինելով պրպտող հակահետախույզի դերում, որի համար նա պաշտոնի բարձրացում է ստանում որպես դիտարկման գծով ավագ աշխատակից: Բացի այդ, կարճ ժամանակով (մոտ երեք ամիս) աշխատել է որպես շարքային միլիցիոներ ներքին գործերի նախարարությանը կից հեծյալ միլիցիայում: Ի դեպ, այդ ջոկատը գլխավորում էր ոչ անհայտ դաշնակցական Լևոն Քալանթարովը և նախատեսված էր հատուկ ներքին անկարգությունների և խռովությունների ճնշման համար: Հայաստանի խորհրդայնացումից հետո Ս. Գ. Երամովը աշխատում է Կարմիր բանակի շարքերում՝ հետագայում դառնալով Անդրկովկասյան և Վրաստանի ԳՔՎ-ի (Գլխավոր Քաղաքական Վարչության. Зак. и Груз. ГПУ) հանրակացարանի պարետ, և այլն: Որոշ ժամանակ աշխատելով Թիֆլիսում Արտգործնախարարության համակարգում, զբաղվել է օտարահպատակների բնակարանատեղավորման թույլտվության հարցերով, այնուհետև տեղափոխվել Բաքու, ուր աշխատել է որպես Բաքվի պարետատան հսկիչ և այլն: Սակայն ինչպես շատերը, ի վերջո ձերբակալվել է և անարդարացի, կեղծ մեղադրանքների հիման վրա՝ դատապարտվել[19]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Գրիգորի Իսահակի Խաչատրյանի կերպարը, մարդ, որն ակտիվ մասնակցություն է ունեցել հետախուզական և հակահետախուզական աշխատանքներում, եղել է Վահագն Գալուստի Սուրադյանի մերձավորագույն զինակիցներից: Գրիգորի Իսահակի Խաչատրյանը Հայաստանի հանրապետության հետախուզական ծառայություն է մտել նրա կազմակերպման սկզբնական պահից սկսած՝ գնդապետ Շնեուրի հանձնարարական-երաշխավորագրի հիման վրա: Սկզբնական շրջանում նա կատարել է հակահետախուզության առընթեր հանձնարարությունների գծով աշխատակցի պարտականությունները: Հետագայում, նրան հանձնարարվում է իրազեկությունը և արտաքին դիտարկումների խումբը: Գ. Խաչատրյանի գործունեությունը տարբեր փուլերում հետախուզության և հակահետախուզության գծով գործունեության ամենատարբեր ձևերի համակցություն էր: Այդպիսի

կազմակերպական-քաղաքական աշխատանքի ոլորտում նա աշխատել է մինչև խորհրդայնացումը: Գ. Խաչատրյանը 1921թ. փետրվարյան ապստամբության ձախողումից հետո ապստամբների հետ միասին տեղափոխվում է Պարսկաստան, ուր մնում է երկուս ու կես տարի: Պարսկաստանում գտնված ժամանակաշրջանում նա բացառապես շփումներ է ունենում դաշնակցական էմիգրանտների հետ, միաժամանակ ծառայության մեջ լինելով խորհրդային կազմակերպությունում՝ «Անդրպետառում» ("Закгосторг"), ուր նա տեղավորվում է իր նախկին պետ Վ. Գ. Մուրադյանի ջանքերով: Վերադառնալով Պարսկաստանից նա տեղավորվում է մի գյուղացու տանը՝ իր բոլոր կապերը և փոխառնչությունները պահպանելով դաշնակցականների հետ:

Ի հավելումն վերն ասվածին մի կարևոր մանրամասն ևս: Անդրժողկոմխորհրդին առընթեր Պետական Քաղաքական Վարչության կողմից դատապարտման պահին (1927թ. հոկտեմբեր) նրանցից կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանը (Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ) ընդամենը 31 տարեկան էր, պորուչիկ Գրիգորի Իսահակի Խաչատրյանը (հակահետախուզության աշխատակից՝ հատուկ հանձնարարությունների գծով) 35 տարեկան էր, պորուչիկ Միքայել Նիկիտայի Դոդոխյանը (հետախուզական բաժանմունքի պետ) 32 տարեկան էր, Գրիգորի Ստեփանի Երամովը (հակահետախուզության աշխատակից) 30 տարեկան էր, և այլն[20]: Այսքանը միանգամայն բավարար է պատկերացում կազմելու ուժերի ծաղկման շրջանում գտնվող այս տաղանդաշատ մարդկանց մասին, որոնք Առաջին հանրապետության հետախուզության և հակահետախուզության ընտրանին են եղել, իրենց կյանքը նվիրաբերելով հայրենիքի ազգային անվտանգության ապահովման չափազանց պատասխանատու և դժվարին գործին, որի ռահվիրաներն էին իրենք հանդիսանում 1918-20թթ. ծանր, սովյալ տարիներին: Աշխատելով բարդագույն ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական իրադրության ոչ ստանդարտ պայմաններում, նրանք ամեն ինչ անում էին, իրենց ուժերի և առկա հնարավորությունների շրջանակներում, որպեսզի հատուկ ծառայությունները լիարժեքորեն կայանան և օգտակար լինեն հայրենիքին նրա ներքին

և արտաքին անվտանգության խնդիրների ապահովման, հանրապետության միջազգային-դիվանագիտական և տնտեսաքաղաքական դժվարությունների հաղթահարման, հաղորդակցության ուղիների անխափան աշխատանքի ապահովման տեսանկյունից:

Այն, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները իրենց ընձեռված հնարավորությունների և առկա ուժերի, կադրային ռեսուրսների պայմաններում վատից-լավից աշխատել են, ձգտել են լավագույն կողմերից դրսևորվել, դա երևում է մի շարք փաստաթղթերի անկողմնակալ և մանրազնին ուսումնասիրությունից: Այլ բան է ասել, որ նրանք ի վիճակի չեղան քիչ թե շատ շոշափելի առավելության հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայությունների (մասնավորապես հակահետախուզության դեմ) դեմ պայքարում, որոնք իրենց ավելի վստահ ու ապահով էին զգում, և որոշ իրավիճակներում ավելի նախաձեռնող ու համարձակ էին: Մի կողմից հզոր աշխարհակալ կայսրության դարավոր փորձը (թեկուզև ասիական տարբերակի, վայրագ ու նենգ), կադրերի ու ռեսուրսների առկայությունը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի նոր կազմավորվող պետության դերում գտնվելը, կադրային սովը, որ նա զգում էր, եղածն էլ անչափ երիտասարդ, չթրծված և օպերատիվ աշխատանքի մեծ փորձ չունեցող: Այդ ծառայությունների կայացման վրա բացասաբար էր ազդում նաև կտրվածությունը Ռուսաստանից, նրա ուսումնական ու ռազմաօժանդակ կառույցներից, գեոքաղաքական մեկուսացվածությունը, ինչպես նաև իշխող արևմտամետ տրամադրությունները, որոնք հետո բումերանգի նման հարվածեցին՝ մերկացնելով թիկունքը: Եվ այնուամենայնիվ, գոյություն ունեցող հայկական հատուկ ծառայությունները ստեղծված իրավիճակում էլ փորձում էին կանխել թշնամու գործակալներին, հայրենիքի համար ծայրահեղ լարված պահերին զորավիգ լինել հանրապետության անվտանգությանը (Բոյուք-Վեդի և Ջանգիբասար, 1918թ. դեկտեմբերյան հայ-վրացական պատերազմ Լոռիի և հարակից շրջանների համար, և այլն):

Այսպես, Հայաստանի հանրապետության Գլխավոր շտաբի հետախուզական ծառայության ընդհանուր բաժնի պետ Պյոտր Պալիևը 1919թ. մի հաղորդագրության մեջ՝ ուղղված Հայաստանի Տերիտորիայի, ադմինիստրացիայի և միլիցիայի կոմիսարին, գրում էր, որ առկա գործակալական տեղեկությունների համաձայն Բոյուք-Վեդիից էջմիածնի շրջանի Խաչափարախ գյուղն է ժամանել ոմն Իրզա Ալի Օղլի՝ բոյուքվեդցիների համար փամփուշտներ ստանալու համար: Այդ դիմումագրում Պ. Պալիևը էջմիածնի գավառական կոմիսարից պահանջում էր անհապաղ ձերբակալել վերոհիշյալ անձնավորությանը և հանձնել իրեն վստահված բաժանմունքի տրամադրությանը[21]:

Առհասարակ, Հայաստանի հանրապետության տարածքում ապրող մահմեդական տարրերը իրենց շատ անհանգիստ էին պահում, լոյալ վերաբերմունք չէին դրսևորում օրինական իշխանությունների նկատմամբ, հաճախակի ապստամբում էին, և իրենց խռովահույզ տրամադրություններով տագնապի մեջ պահում կենտրոնական իշխանություններին: Ստեղծված վտանգալից իրավիճակում հատուկ ծառայությունները հարկադրված զբաղվում էին այս կամ այն վայրում (Ջանգիբասար, Կարս, Բասարգեչար և այլուր) հակառակորդի ծպտված գործակալներին և հետախույզներին մերկացնելով ու կանխելով նրանց հակաօրինական, հակահայկական գործողությունները: Այսպես. Նոր Բայազետի գավառային կոմիսար Խոսրոևը 1919թ. հուլիսի 30-ին գնդապետ Շնեուրին ողղված հեռագրում տեղեկացնում է, որ "Քուրդ" անունով հետախույզը հաղորդում է, որ վրաններում ապրող քոչվոր թաթարները պահանջագիր են ուղարկել Ելիսավետպոլ՝ խնդրելով ուղարկել զորքեր, սպառնալով, հակառակ դեպքում, Հայաստանի իշխանությանը ենթարկվելու պատրաստակամություն դրսևորել: Տեղեկատվության մեջ նաև ասվում էր, որ այդ նպատակադրումով նրանք Ջանգլիկ գյուղն են ուղարկել իրենց մարդուն, որ Թեմուր բեկը (նրանց գործակալը) ստացել է համապատասխան ծրար և հայտարարություն է արվել վրաց-լեզգիական ուժերի գործողությունների մասին (հասկանալի է՝ հակահայկական ուղղվածության): Այնուհետև ավելացվում էր, որ վերջինս արդեն գրանցել է

200 մարդ կամավոր և նրանց ուղարկել Վերին Շորժա գյուղի սահմանակայքը, սպասելով այնտեղ ավելի քան 20 հրանոթների տեղ հասնելուն, որպեսզի դրանց օգնությամբ ետ վերցնեն իրենց կողմից լքված Հայաստանի տարածքում գտնվող նախկին ադրբեջանաբնակ գյուղերը:[22] Բնականաբար, ինչպես տեսնում ենք, հայկական հատուկ ծառայությունները բավարար տեղեկատվություն ունեին կատարվող անց ու դարձի մասին, և տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ ձգտում էին խափանել և չեզոքացնել թշնամու հակահայ գործողությունները, նրա գործակալական ցանցը Հայաստանի տարածքում: Կան նաև այլ կարգի հետաքրքրական տվյալներ: Երբեմն էլ Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայությունները բախվում էին այսպես կոչված «տեղական» բնույթի պրոբլեմների: Որոշ դեպքերում նրանք ստիպված էին կանխել որոշ գավառական հայ իշխանավորների օրինազանցությունները, կաշառակերության փաստերը: Այսպես, ներքին գործերի նախարարին ուղղված մի տեղեկատվության մեջ (1919 թվական) զինվորական նախարարության գլխավոր շտաբի մի գնդապետ գրում էր, որ 3-րդ հետևակային բրիգադի պետի ունեցած տեղեկությունների համաձայն Քարվանսարայի կոմիսարը ազատ բաց է թողնում զինված մարդկանց Ադրբեջանից Հայաստան քոչի համար (բնականաբար՝ բացահայտ կաշառքի դիմաց): Դիմումագրում զինվորական նախարարի անունից պահանջվում էր անհապաղ ձեռնարկել միջոցառումներ՝ դադարեցնելու համար զինված մարդկանց անցումը սահմանով:[23]

Արխիվային մի այլ փաստաթուղթ էլ արժանահիշատակ վկայություն է տալիս Կարսի նահանգում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Խոսքը վերաբերում է 1918թ. հոկտեմբերի 20-ին թվագրվող գնդապետ Շնեուրի և դիվիզիայի գլխավոր շտաբի հետախուզության գծով ավագ համհարզ պոդպորուչիկ Սարգիսովի՝ հակառակորդի մասին ներկայացրած տեղեկությունների համահավաքին: Դրանում տեղեկատվության հեղինակները հաղորդում էին Ուլուխանլու գյուղում գտնվող թուրքական զորքերի, ինչպես նաև նրանց տեղաշարժերի մասին Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Այնուհետև տեղեկացվում էր 1918թ. հոկտեմբերի 14-ին

Բաքու - Բաթում - Թիֆլիս երթուղով Ալեքսանդրապոլ ժամանած թուրքական զորքերի էշելոնի մասին (այն Բաթումից ծովով չէր մեկնել, տագնապելով անտանտյան դաշնակիցների կողմից Վառնան գրավելու փաստից), որն այնուհետև նպատակադրված էր ուղղություն վերցնել դեպի Կարս: Տեղեկագրի վերջում ինֆորմացիա էր տրվում նաև հայկական ուժերի, Հայաստանի տարածքի թաթարաբնակ շրջակա գյուղերի և նրանցում իշխող որոշակի տրամադրությունների մասին:[24]

Մի այլ արխիվային փաստաթղթից ակնհայտ է դառնում զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանի հետաքրքիր գրության մասին՝ ուղղված գլխավոր շտաբի հակահետախուզական բաժնին: Դրանում վերջինս հաղորդում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն, Շուրայի (այսպես կոչված «Միլի Շուրա», Կարսի մարզում գտնվող մուսուլմանական «ինքնավարությունը») նախկին «փոխպրեզիդենտ» Ալի Ռիզան փախչելով Բաթումի բանտից, Թիֆլիսով անցել է Ղարաչախ, այնտեղից էլ Աղբաբայի շրջան, որից հետո էլ վերջինս անցել է Ջարուշատով Օլթիի շրջան (1919թ. հուլիս): Այնուհետև պրապորշչիկ Հովսեփյանը ավելացնում էր, որ կասկածներ չկան, որ Ադրբեջանը ծգտում է Աղբաբայի, Ջարուշատի, Արդահանի և Օլթիի շրջանում ստեղծել «երկրորդ Ղարաբաղ»: Ավելին, հաղորդում է վերջինս, որ վերջին ժամանակներում նկատվում է վրաց - ադրբեջանական միության, համադաշնակցության նման մի բան: Եվ դա հաստատում էր փաստով, ասելով, որ Թափաքեյսկի գյուղական ընկերության ավագը հաղորդում էր, որ Ախալքալակի գավառի սահմանամերձ Գոռլովկա և Տրոիցկ գյուղերն են ժամանել ավելի քան 300 վրացական զինվոր: Հատուկ ծառայության աշխատակիցը տեղեկացնում էր նաև, որ դրանից բացի կան տվյալներ, որ մալոկանները ևս աշխատում են թաթարների հետ փոխառնչությունների պայմաններում: Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր բերում նաև թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, և ասելիքն ամփոփում է, արձանագրելով, որ այդ կապակցությամբ զրույց է ունեցել էրզրումում գտնվող անգլիական շտաբի գնդապետ Ռոլենսոնի հետ:[25] Այս

փաստաթղթից նաև ակնհայտ է դառնում, թե ինչպիսի դժվարին գեոքաղաքական միջավայրում էին ստիպված աշխատել և գոյատևել Հայաստանի Առաջին Հանրապետության երիտասարդ և անփորձ հետախուզությունն ու հակահետախուզությունը: Այդ ծառայությունների աշխատակիցներին հետաքրքրում էր ամեն ինչ. ոչ միայն թաթարների տեղաշարժերը, նրանց տրամադրություններն ու վերջիններիս կողմից սպասվող քշնամական գործողությունները[26], այլև հաղորդակցության ուղիների, ճանապարհային հանգույցների ու երկաթուղու մասին տեղեկատվությունը: Այսպես՝, 1919թ, մայիսի 11-ին Գլխավոր շտաբի պետ գնդապետ Զինկևիչը, դիմելով մոբիլիզացիայի (զորահավաքի) և ռազմա-ադմինիստրատիվ բաժնի պետին, խնդրում էր իրեն հաղորդել անհրաժեշտ տեղեկություններ Հայաստանի երկաթուղային ուղիների վիճակի, շարժակազմի, անձնակազմի, թողունակության, վառելիքա-էներգետիկ պաշարների և այլնի մասին: Վերջում նա ավելացնում էր, որ այդ տեղեկություններն անհրաժեշտ են օպերատիվ բնույթի պատճառներով[27]: Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայության համապատասխան կառույցները որոշակի տեղեկատվություն ունեին նաև տարածաշրջանում կատարվող հասարակական - քաղաքական գործընթացների և մասնավորապես, քաղաքական այնպիսի մի ուժի շուրջը ծավալված անց ու դարձի մասին, ինչպիսին բոլշևիզմն էր: Առանձին փաստաթղթեր թույլ են տալիս եզրահանգելու (թեկուզև և որոշ դեպքերում՝ անուղղակիորեն), որ նրանք ինֆորմացիա ունեին Հայաստանում գործող բոլշևիկների մասին, չնայած այն ոչ միշտ էր լիարժեք և ամբողջական, և որը հնարավորություն չէր տալիս իրատեսական ցուցումներ տալ բոլշևիզմի ու բոլշևիկյան շարժման կանխարգելման հնարավորությունների մասին: Այսպես, Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պորուչիկ Պալիևը հաղորդում է 3-րդ առանձին հետևակային բրիգադի պետ գեներալ-մայոր Բաղդասարովից ստացված հեռագրի մասին, ուր նա տեղեկացնում էր Ղարաքիլիսայում, այնուհետև Դիլիջանում բոլշևիկների գործունեության մասին[28]: Մի այլ

հաղորդագրության մեջ տեղեկացվում էր Ալեքսանդրապոլում ուժեղացող բոլշևիկյան խմորումների մասին, և այլն[29]:

Հարկ է անդրադառնալ նաև Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության մի կարևոր էջի ևս: Արխիվային կցկտուր տվյալների մանրազնին ուսումնասիրությունից պարզվում է, որ ՀՀ հետախուզությունը և հակահետախուզությունը իրենց գործունեության անհաջող կողմերի հետ միասին, ունեցել են նաև լուսավոր ու հաջողված էջեր: Մասնավորապես, դրանք բավականին նախածեռնող են եղել հայ-վրացական առնչություններում, և առանձնապես 1918թ. դեկտեմբերյան երկշաբաթյա հայ-վրացական պատերազմում: Հայերը Վրաստանը և վրացիներին վատ չգիտեին, և դա պատահականություն չէր ամենևին, ինչն էլ պայմանավորեց Հայաստանի հատուկ ծառայությունների որոշ ձեռքբերումները: Հայաստանի հատուկ ծառայությունների հիմնադիրը՝ գնդապետ Զինկևիչը բավականաչափ լավ տեղեկացված էր Լոռու և Վրաստանին հարող հայաբնակ տարածքներում ընթացող գործընթացներին, որոնց մասին հայտնում է ոչ միայն զինվորական նախարարին, այլև հատուկ տեղեկատվություն է ներկայացնում վարչապետին: Վերջինս այդ փաստերը ներկայացնում է 1918թ. դեկտեմբերի 12-ի Հայաստանի խորհրդի (պառլամենտի) նիստի ժամանակ իր ունեցած հաղորդում-հայտարարության մեջ, տեղեկատվություն տալով Լոռվա շրջանում սկսված ընդհարումների մասին վրաց զորքի և հայ ազգաբնակչության միջև, Ուզունլար և Ծաթար գյուղերի վրացիների կողմից հրետանակոծման և գնդացրային կրակի ենթարկման մասին[30]: Այս փաստաթղթի հետ ծանոթացումը ցույց է տալիս գլխավոր շտաբի պետ Զինկևիչի քաջատեղյակությունը Լոռվա շրջանում ընթացող իրադարձությունների մասին, որը հնարավորություն տվեց հայկական զորամիավորումներին, այդ թվում Դրոյի գլխավորությամբ գործող, վճռականորեն հաղթահարելու վրաց գեներալների գլխավորած վրացական բանակի դիմադրությունը, էապես ազդելու պատերազմի ընդհանուր ելքի վրա:

Այդ նույն տեղեկացվածությունն է զգացվում նաև Զինկևիչի այլ հաղորդագրություններում: Որոշ բաներ, այնուամենայնիվ, հայկական հատուկ ծառայություններին հաջողվում էր, և դա երևում է նաև նրանց գործունեությունից Արդահանի շրջանում, ուր ևս բախվում էին հայ-վրացական շահերը, և որտեղ հայերն ստիպված էին միայնակ պայքարել ադրբեջանա-թուրքական-վրացական միացյալ ոտնձգությունների դեմ հայկական տարածքների և ազգաբնակչության նկատմամբ: Հայաստանի անվտանգության խնդիրները պահանջում էին հաղթահարել նաև այդ տարածաշրջանի մահմեդական տարրերի համառ դիմադրությունը օրինական իշխանություններին, որոնց մասին հատուկ ծառայությունները այս կամ այն կերպ տեղեկացված էին: Այսպես, Հայաստանի Հանրապետության Գլխավոր շտաբի հակահետախուզության բաժնի պետ պորուչիկ Հովան Խան-Կոտուրսկին և նրա օգնական պոդպորուչիկ Մ. Դոդոխյանը 1920թ. սեպտեմբերի 20-ին զորքերի հրամանատարին ներկայացված համահավաք տվյալներում արձանագրում էին, որ Արդահանի շրջանի մուսուլմանական բնակչության շրջանում լուրեր են տարածվում, որ մոտ ապագայում մարզը պետք է անցնի Վրաստանին (ակնհայտ է վրացական հատուկ ծառայության ձեռագիրը): Տեղեկացվում էր նաև Արդահանից Արդվին ընկած տարածքում զենքի տեղափոխման ու զորքերի տեղաբաշխման մասին, որոնց հետ միաձայն գործում էր նաև հեծյալ մուսուլմանական դիվիզիոնը, ինչպես նաև Նիկոլաևկայում և այլուր վրաց զորաջոկատների կենտրոնացման մասին՝ հետևակ և հեծյալ[31]: Ինչպես տեսնում ենք, չնայած արխիվային տվյալների բացահայտ սակավությանը, այնուամենայնիվ եղածն էլ հիմք է տալիս անել որոշ կարևոր եզրահանգումներ ՀՀ Առաջին հանրապետության հետախուզության և հակահետախուզության գործունեության այս կամ այն կողմի մասին:

Հարկ է սակայն հատուկ ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ հետախուզությունը և հակահետախուզությունը աշխատում էին՝ հաղթահարելով սոսկալի ֆինանսական-տնտեսական և կադրային դժվարություններ: Եվ այնուամենայնիվ, երիտասարդ

հանրապետությունը իր սուղ ֆինանսական միջոցներից որոշ գումարներ էլ հատկացնում էր վերջինիս, իսկ ուժային գերատեսչությունները՝ ռազմական և ներքին գործերի նախարարությունները ժամանակ առ ժամանակ օժանդակում էին նրանց: Այդ մասին են վկայում ստորև բերված արխիվային կարևոր փաստաթղթերը, որոնք զգալի արժեք են ներկայացնում: Այսպես, Գլխավոր շտաբի պետին ուղղված զեկուցագրում գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ փոխգնդապետ Շնեուրը 1919թ. հունիսի 8-ին հայտնում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Կարսի քաղաքացիական նահանգապետն իր տրամադրության տակ ունի 250 ոսկյա թուրքական լիրաներ, որոնք բռնագրավվել են գերված ասկյարներից: Այնուհետև նշելով, որ հետախուզական նպատակներով լիրաների ծայրահեղ անհրաժեշտության նկատառումով, ինչպես նաև շուկայում դրանց սակավության պատճառով խնդրվում է միջնորդել այդ լիրաները իրեն վստահված բաժնի տնօրինությանը հանձնելու: Զեկուցագրի վերջում Շնեուրը նշում էր, որ ասկյարներից լիրաների բռնագրավման պահին դրանք արժեին 350 ռուբլի, և որ այդ գնահատումով լիրաները մտցվել են մատյան[32]: Թե ինչքան դժվար էր այդ խնդիրը լուծել, երևում է հետագա զեկուցագրերից, որոնցից ակնհայտ է դառնում բյուրոկրատական քաշքշուկների հաղթահարման ողջ պատկերը: Իր հերթին, գլխավոր շտաբի պետ գնդապետ Զինկևիչը դիմում է զինվորական նախարարին (1919թ. հունիսի 28): Զեկուցագրում նա հայտնում է, որ հետախուզության բաժնի համար ոսկյա լիրաների ծայրահեղ անհրաժեշտության պատճառով, ինքը միջնորդագրություն է հարուցում ներքին գործերի նախարարի առաջ պատշաճ ձևով Կարսի նահանգապետին կարգադրություն անելու մասին՝ նշված փողերը ըստ կուրսի գլխավոր շտաբի հետախուզական բաժնին փոխանցելու մասին[33]: Հատուկ ծառայության սպաները առհասարակ գումարները և այդ մասին փոխանցումների տվյալները ճշտապահորեն գրանցում էին, և դա այդ բնագավառում ծածուկ չէր արվում: Ընդունված էր բոլոր «մանրուքները» խելամտորեն և ճշմարտացիորեն գրանցել և գնահատել: Եվ դա այդ բնագավառում չգրված սովորույթ է և արարողակարգ: Թուրքական վերը

նշված ոսկյա լիրաները հետախուզական բաժնին փոխանցելու մասին է հայցում նաև գեներալ-մայոր Արարատովը ներքին գործոց նախարարի առաջ 1919թ. հուլիսի 3-ի գրությունում[34]: Դրա վրա ներքին գործոց նախարարը մակագրում է, որ նշված փողերն արդեն գտնվում են ֆինանսների նախարարության տրամադրության տակ[35]: Ներքին գործերի նախարարը գրությունը վերադարձնելով (1919թ. հուլիսի 5) զինվորական նախարարին, հայտնում էր, որ նշված դրամներն արդեն գտնվում են ֆինանսների նախարարությունում, և որ արվել են համապատասխան կարգադրություններ[36]: Սակայն քաշքշուկները շարունակվում են, իսկ ոսկյա լիրաները ծայրահեղորեն անհրաժեշտ էին հետախուզական բաժնին: Վերջինս էլ, ի դեմս գլխավոր շտաբի պետ Զինկևիչի (փաստաթուղթը ստորագրել էր նաև բաժնի պետի պարտականությունները կատարող շտաբս-կապիտան Դեվոյանը) այս անգամ էլ դիմում է ֆինանսների նախարարին՝ խնդրելով նրա կարգադրությունը ըստ կուրսի թուրքական լիրաները իրեն վստահված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնին փոխանցելու համար[37]:

Այստեղից միանգամյան ակնհայտ է, թե ինչպիսի դժվարություններ էին ստիպված լինում հաղթահարելու Հայաստանի հատուկ ծառայությունները, իրականացնելով անհրաժեշտ հետախուզական աշխատանքները Թուրքիայի՝ Հայաստանին հարող տարածքներում և այլուր: Վերջապես, մի արխիվային փաստաթուղթ ևս, որն ավարտուն կդարձնի վերը բերված միտքը. այսպես, ֆինանսների նախարարին ուղղված 1919թ. սեպտեմբերի 13-ի գրությունում Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ գնդապետ Շնեուրը և նրա օգնական, ծովակալության ("Адмиралтейство") գծով օգնական խան Կոտուրսկին հայտնում են, որ Գլխավոր շտաբի հետախուզական բաժինը արտասահմանյան դրամների խիստ կարիք է զգում, առանց որոնց անհնար է աշխատել: Վերջիններս խնդրում էին հայտնել, թե չկա՞ արդյոք հնարավորություն իրենց համար որոշ գումար փոխանակել թուրքական լիրաների և ֆրանսիական ֆրանկների՝ Նուբար փաշայի կողմից ուղարկված գումարների հաշվին, որոնք հնարավոր է

կան նախարարության տրամադրության տակ, և ի՞նչ կուրսով կարելի է իրականացնել փոխանակումը[38]:

Եվ առհասարակ, Հայաստանի հատուկ ծառայությունները տարադրամի (վալյուտայի) խիստ կարիք էին զգում, և դրանք անհրաժեշտ միջոց էին նրանց աշխատանքի արդյունավետ կազմակերպման առումով: Այսպես, հասկանալի նկատառումներով ֆինանսների նախարարությունը Երևանի գանձապետարանին ուղարկված հատուկ գրությամբ տեղեկացնում էր ուղարկված ադրբեջանական դրամներ պարունակող կաշվե կնքված պայուսակի մասին, և խնդրում էր այն պահպանության առնել մինչև հատուկ կարգադրությունը[39]:

Հաղթահարելով զգալի ֆինանսական, տեխնիկական-տնտեսական և կազմակերպչական-կադրային դժվարություններ, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները հնարավորին չափ աշխատում էին՝ ձգտելով լուծել հանրապետության անվտանգության ապահովման խնդիրները, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն ռազմաքաղաքական կացության և Անդրկովկասում ու նրա շուրջ ուժերի գեոքաղաքական դասավորվածության մասին: Հաճախ նրանք հանդես էին գալիս հանրապետությունը արտաքին աշխարհի հետ կապող օղակն ապահովողների դերում, երբեմն էլ մասնակցություն էին ցուցաբերում Հայաստանի համար կենսական արժեք ներկայացնող պարենի, վառելիքի և այլնի ձեռքբերման ու տեղափոխման գործընթացներին: Արխիվային մի փաստաթղթից պարզ է դառնում, որ 1919թ. օգոստոսի սկզբին ավտոմեքենայով Բաթումի են ուղևորվում Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ փոխգնդապետ Շնեուրը և կապիտան Դեվոյանը: Այդ ավտոմեքենայով Կարս-Բաթում տրանսպորտային վարչության կողմից ուղարկվում է նաև ուսանող Վահան Մամիկոնյանը մի շարք գնումներ կատարելու հանձնարարությամբ[40]:

Արխիվային որոշ փաստաթղթերի ուշադիր ուսումնասիրությունից նաև պարզորոշվեց, որ Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը իր ուժերի ներածին չափով (վերն արդեն այդ մասին մասնակիորեն նշվել է) զբաղվել է Թուրքիայի ու Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի, և

առաջին հերթին Կարսի մարզի, Ջանգիբասարի և այլ շրջանների, ինչպես նաև հարակից հարևան պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի մասին ինֆորմացիայի հավաքմամբ, տեղեկագրեր է կազմել գործակալական տվյալների հիման վրա, որոնք հնարավորություն են տվել որոշ չափով պատկերացնել ուժերի տեղաբաշխումը հայտնի տարածաշրջանում, և այլուր: Մասնավորապես, այդպիսի փաստաթուղթ ենք մենք հանդիպում հետախուզական բաժնի պետ Վ. Գ. Մուրադյանի և նրա օգնական, պոդպորուչիկ Մ. Դոդոխյանի ստորագրությամբ[41] և այլն:

Մի այլ փաստաթղթից, որ ուղարկվել է գեներալ-մայոր Սիլիկյանի և գլխավոր շտաբի, նրա հետախուզական և հակահետախուզական ծառայության կազմակերպիչ գնդապետ Զինկևիչի կողմից ռազմական նախարարին, ակնհայտ է դառնում անգլիացիների դիրքորոշումը որոշ կարևոր իրադարձությունների կապակցությամբ: 1919թ. մարտի 2-ին թվագրված այդ գրությունում վերոհիշյալ անձիք կարևոր տեղեկատվություն են հաղորդում այն մասին, որ մեր կառավարության կողմից Հայաստանում սովի մասին հայտարարությունից հետո, Բաքվում գտնվող անգլիական հրամանատարությունը չեղյալ էր հայտարարել իր իսկ որոշումը Բաքվից Հայաստան մի էշելոն հայ զինվորների ուղարկելու մասին, որոնց հետ ենթադրվում էր առաքել ռազմամթերք և որոշ քանակությամբ ուտեստեղեն: Այնուհետև, այդ նույն աղբյուրից պարզվում էր, որ համաձայն որոշ ստուգված տեղեկությունների Բաքվում պատրաստված են դեպի Հայաստան առաքման (անգլիացիները ծգծգում էին տարբեր պատրվակներով) 2 վագոն ալյուր, 6 վագոն ցորեն, 350 հատ եռագիծ հրացան՝ դրանց համար նախատեսված 400000 փամփուշտով, 2 ական «Կոլտ» և «Մաքսիմ» սիստեմի գնդացիրներ: Ավարտում էին այս կարևոր տեղեկությունը Սիլիկյանը և Զինկևիչը, ռազմական նախարարից խնդրելով, ծայրահեղ անհրաժեշտ այդ ամենը Հայաստան տեղափոխելու համար համապատասխան միջնորդությամբ հանդես գալ բրիտանական հրամանատարության առաջ[42]:

Սակայն ակներև է, որ հատուկ ծառայությունների թուլությունն արտահայտվեց նրանում, որ նրանք մասնավորապես 1920թ. աշնան

թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, շատ աղոտ պատկերացումներ ունեին հենց այդ թուրքական բանակի թե թվաքանակի, թե պլանների և թե առհասարակ շատ հարցերի վերաբերյալ: Արդյունքն այն եղավ, որ չկարողացան պատնեշվել թուրքական զավթողական պլաններից, և արդյունավետորեն հակազդել Ք. Կարաբեքիրի հետախուզական մարմինների գործունեությանը: Այդ փաստը հաստատվում է թեկուզ նրանով, որ տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի մասին, մասնավորապես թուրքական բանակի թե ռեալ կազմի, և թե թվաքանակի մասին: «... տաճիկները լուռ ու անաղմուկ պատրաստվում էին Հայաստանի վրա արշավելու: Հայկական կառավարությունը շատ ուշ իմացավ նրանց այդ դիտավորության մասին»[43], - գրում է ժամանակակիցը՝ Յ. Իրազեկը:

Մեկ այլ ժամանակակից՝ Կարո Սասունին ևս անդրադառնալով այդ հարցին՝ գրում է, որ այն ժամանակ, երբ թուրքական բանակը Հայաստանի սահմանների վրա, Նախիջևանի և Կարսի ճահանգներում նախապատրաստություններ էր տեսնում և ուներ ճյուղավորված լրտեսական ցանց, որի միջոցով ստանում էր անհրաժեշտ և տեղին ինֆորմացիա, ապա Հայկական բանակի թիկունքն այդ ժամանակ անապահով վիճակի մեջ էր, և մանավանդ գրեթե «անգոյ էր հայկական հետախուզությանը թուրքական գործում»: Եզրափակելով իր ասելիքը՝ Կ. Սասունին ավելացնում է. «Մենք զուրկ կը մնայինք շարք մը ճշգրիտ տեղեկութիւններէ, որոնց չգոյութեան պատճառով՝ բավական վնասներ կրեցինք»[44]: Իհարկե, ամեն ինչ չափազանցնելը ևս լավ զբաղմունք չէ, մանավանդ, երբ գործի մասին դատում է և դատավորի դեր է ստանձնում ոչ պրոֆեսիոնալը, հետախուզական գործից հեռու այնպիսի մի մարդ, ինչպիսին Կ. Սասունին, չնայած ասվածի ռացիոնալ հատիկներին: Վերն արդեն բերված մի շարք փաստերը վկայում են, թե ինչպիսի դժվարին պայմաններում էին ստեղծվում Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները, ինչպիսի արգելքներ էին հաղթահարում ֆինանսական միջոցներ հայթհայթելու համար, որպեսզի կարողանան իրականացնել հետախուզական աշխատանքներ, այդ թվում նաև հարևան Թուրքիայի

նկատմամբ, որն ուներ անհամեմատ ավելի մեծ ֆինանսական-տնտեսական հնարավորություններ այդ առումով և կազմակերպված, ռեսուրսներով հզոր կանոնավոր բանակ, ինչպես նաև աշխարհաքաղաքական հզոր զինակից-պետություններ: Փաստերը վկայում են, որ Առաջին հանրապետության հետախուզությունը և հակահետախուզությունը հնարավորի շրջանակներում ձգտել են կայանալ և իրագործել անհրաժեշտ աշխատանքները երկրի անվտանգության համար, գործելով շատ խճճված և բարդ աշխարհաքաղաքական միջավայրում՝ չունենալով հուսալի դաշնակիցներ:

Կա հետաքրքրական ևս մի փաստաթուղթ, որից ակնհայտ է դառնում, որ ռազմական նախարարությունը իր ուժերի և հնարավորությունների շրջանակներում զբաղվել է հետախուզական գործի կազմակերպմամբ, տարել է որոշակի գործնական աշխատանք: Ներքին գործերի նախարարին հասցեագրված 1919թ. հունիսի 21-ի գրությունում գեներալ-լեյտենանտ Սիլիկյանը հաղորդում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Աջարիայից, Վրաստանից և Ադրբեջանից լրտեսական նպատակներով Հայաստան է ուղարկվել ագենտների մեծ թիվ, որոնք ցանկություն են հայտնել ծառայության մտնելու զանազան մանր պաշտոններով Հայաստանում, օրինակ, բուֆետապաններ երկաթուղում և այլն: Այնուհետև ներքին գործերի նախարարից խնդրվում էր հաղորդել, թե կա՞ն արդյոք այդպիսի անձնավորություններ, որոնք ցանկություն են դրսևորել որոշակիանալու ծառայության մեջ: Պահանջվում էր նրանց ազգանունները, և եթե նրանցից ոմանք արդեն ընդունվել էին աշխատանքի, ապա դրանց անհապաղ հեռացման իրականացումը Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի շրջաններից[45], մի խոսքով՝ սահմանային շրջաններից: Սա ուշագրավ մի փաստաթուղթ է, որն ապացուցում է, որ չնայած հայ ժողովրդի և Հայաստանի հանրապետության ծննդի, գոյության ծանր ու անտանելի պայմաններին, 1918-20թթ. որոշակի քայլեր էին արվում ոչ միայն կազմակերպելու հատուկ ծառայություններ, հետախուզություն և հակահետախուզություն, այլև

դրանք աշխատում էին՝ մեծ ճիգեր գործադրելով ապահովելու Հայաստանի ազգային-պետական անվտանգությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հատուկ ծառայություններն այն կարևորագույն կառույցներն են, առանց որոնց անհնարին է պատկերացնել անկախ պետականության իրավիճակ, ինքնուրույնություն և լիարժեք արտաքին քաղաքականություն առհասարակ: Հատուկ ծառայությունները կազմել են Հայաստանի առաջին Հանրապետության ռազմաքաղաքական համակարգի անբաժան մասը: Հենց դրանով էր նաև Հայաստանը կազմակերպված պետություն: Հետազոտությունից պարզորոշ է դառնում, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները ստիպված էին կազմակերպական գործընթաց ապրել գեոքաղաքական մեկուսացման պայմաններում՝ հաղթահարելով ահռելի ֆինանսատնտեսական և կադրային-տեխնիկական դժվարություններ, փոխարենը հենվելով անտանտյան մեծ ու հզոր դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի օգնության խախուտ հույսի վրա, դեմ առ դեմ կանգնելով ադրբեջանա-վրացական և թուրք քեմալական–խորհրդային սինդրոմի առաջ: Առկա արխիվային փաստաթղթերից և այլ վավերագրերից ակնհայտ է, թե ինչպիսի կադրային գերխնդիրների հետ էր բախվում Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզությունը և հակահետախուզությունը, որի ղեկավարներն իրենք իսկ անչափ երիտասարդ էին և սովորելու շատ բան ունեին: Այստեղից միանգամայն օրինաչափ էր, որ աշխարհաքաղաքական բարդ և խճճված ռազմաքաղաքական իրադրությունում ինչպիսի խրթին պրոբլեմների հետ էր բախվում հայկական հատուկ ծառայությունը դեմ դիմաց ելնելով շատ ավելի զորեղ ու կադրային, տնտեսական, ֆինանսական անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ու ռեսուրսներ իր մեջ պարփակող Թուրքիայի հետ, որն ավելացրած դրան՝ ուներ հզոր դաշնակիցներ: Արդյունքում՝ Հայաստանի ջախջախիչ պարտությունը 1920թ. (սեպտեմբեր-հոկտեմբեր) թուրք-հայկական պատերազմում, որում հայկական հատուկ ծառայությունները չկարողացան քիչ թե շատ ռեալ հակադրվել թուրքական հատուկ ծառայություններին, որոնց թիկունքին զգացվում էր մեծ տերությունների ամենևին էլ ոչ հայանպաստ քայլերի

կոպիտ շնչառությունը: Ամփոփելով վերն ասվածը, կարելի է եզրահանգել, որ արդեն իր 9-րդ տարին բոլորող Հայաստանի Երրորդ Հանրապետությունն ունի անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ (բոլոր առումներով, թեկուզև և այստեղ էլ կան չլուծված խնդիրներ) կազմակերպելու և ուղղություն տալու ամենաբարձր մակարդակով Հայաստանի հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության աշխատանքներին, հենվելով Առաջին, ինչպես նաև Երկրորդ՝ սոցիալիստական հանրապետության ուսանելի պատմաքաղաքական փորձի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ (այսուհետև ՀՀ ՊԿՊԱ), Ֆ. 201, ց. 1, գ. 484, թ. 9;
2. Տես՝ նույն տեղում, գ.489, թ.62, Ֆ.278, ց.1, գ.11, թ.16 և այլն;
3. Նույն տեղում, Ֆ.276, ց.1, գ.114, թ.10-12;
4. Նույն տեղում, թ.13;
5. Նույն տեղում, Ֆ.201, ց.1, գ.491, թ.167;
6. Տես՝ ЕФ МНЮИ – XXI век (газета-журнал).- 1998.- №07-08; сентябрь-октябрь, с. 8-10;
7. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.222, ց.1, գ.24, մաս III, թ.431;
8. Տես՝ նույն տեղում, Ֆ.276, ց.1, գ.177, թ.1;
9. Տես՝ նույն տեղում, գ.158, թ.4, Ֆ.200, ց.1,գ.299, թ.4,7;
10. Տես՝ նույն տեղում, Ֆ.276, ց.1, գ.177, թ.119;
11. Տես՝ նույն տեղում, Ֆ.368, ց.1, գ.4, թ.56;
12. Տես՝ ՀՀ Հասարակական և Քաղաքական Կազմակերպությունների Փաստաթղթերի Կենտրոնական Պետական Արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀԿՔՓ ԿՊԱ), Ֆ.91, ց.3, գ.3594, թ.2-20; ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.200, ց.1, գ.180, թ.14; Ֆ.368, ց.1, գ.4, թ.4; և այլն:
13. Տես՝ ՀՀ ՀԿՔՓ ԿՊԱ, Ֆ.91, ց.3, գ.3594, թ.6-7, թ.8-13;
14. Տես՝ ЕФ МНЮИ –XXI век. –1998, №07-08. –сентябрь-октябрь, с. 8-10; ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.91, ց.3, գ.3594, թ.6-7;
15. Տես՝ ЕФ МНЮИ –XXI век. –1998, №07-08. –сентябрь -октябрь, с.8-10;
16. Տես՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, Ֆ.91, ց.3, գ.3594, թ.16-17;
17. Տես՝ նույն տեղում, թ.12-14;
18. Տես՝ նույն տեղում, թ.13-14;
19. Տես՝ նույն տեղում, թ.14-15;
20. Տես՝ նույն տեղում, թ.2, 20;
21. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.201, ց.1, գ.168, թ.4;
22. Տես՝ նույն տեղում, թ.12;
23. Տես՝ նույն տեղում, գ.168, թ.32;
24. Տես՝ նույն տեղում, Ֆ.222, ց.1, գ.24, մաս III, թ.413;
25. Տես՝ նույն տեղում, Ֆ.201, ց.1, գ.168, թ.38;
26. Տես՝ նույն տեղում, գ.47, թ.11-12;
27. Տես՝ նույն տեղում, գ.62, թ.48, 50;
28. Տես՝ նույն տեղում, գ.168, թ.55-56;
29. Տես՝ նույն տեղում, թ.66;
30. Տես՝ նույն տեղում, Ֆ.198, ց.1, գ.15, թ.34, 38-39;
31. Տես՝ նույն տեղում, Ֆ.200, ց.1, գ.607, թ.40;
32. Տես՝ նույն տեղում, Ֆ.202, ց.1, գ.37, թ.58;

33. Տես՝ նույն տեղում;
34. Տես՝ նույն տեղում, թ.57;
35. Տես՝ նույն տեղում;
36. Տես՝ նույն տեղում;
37. Տես՝ նույն տեղում, թ.56;
38. Տես՝ նույն տեղում, թ.116;
39. Տես՝ նույն տեղում, գ.100, թ.37;
40. Տես՝ նույն տեղում, Ֆ.368, ց.1, գ.4, թ.4;
41. Տես՝ նույն տեղում, գ.5, թ.99-100;
42. Տես՝ նույն տեղում, Ֆ.200, ց.1, գ.180, թ.14;
43. Տես՝ Յ. Իրազեկ, Մօտիկ անցյալից: Պատմական դէպքեր ապրումներ, 1917-1922. 1956. Տպ. Համազգայինի, Պէյրութ, էջ 67;
44. Տես՝ Կարօ Սասունի, Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 212;
45. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.201, ց.1, գ.167, թ.147:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Հատուկ ծառայությունները 1918-20թթ. 5
Ամփոփում 35
Գրականություն 37

Վանիկ Հրանտի Վիրաբյան

Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից)։

Ваник Грантович Вирабян

Специальные службы Первой Республики Армении в 1918-1920 гг. (Из новейших страниц политической истории армянского народа)

Խմբագիր՝ Ն. Ա. Խաչատրյան

Պատվեր 921 Տպաքանակ՝ 250 օրինակ
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տպարան
Համալսարանի և տպարանի հասցեն. 375009, Երևան 9, Տերյան 105.